ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2.1

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 06.02.2018թ. ԹԻՎ 79-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 21 փետրվարի 2018թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Աբգարյան ԳԿՎ պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա. Քալոյան ՇՇՇ բաժնի պետ

Լ. Սողոմոնյան ՇՇՇ բաժնի առ. ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Հ. Քալաշյան Սան-տնտեսական բաժնի աշխղեկ

Գ.Մանուչարյան ՇՇՇ բաժնի առ. ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

Նիստին մասնակցում էր <<Սփլեշ Ուոթեր>> ընկերության տնօրեն Ա. Մանուկյանը

Օրակարգ՝

1. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-03/18>> ծածկագրով բնական ջրի ձեռքբերման գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման նպատակով հայտերի բացման կասեցված նիստի շարունակություն

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ <<Էվրի Դեյ>> և <<Սփլեշ Ուոթեր>> ընկերությունները հրավիրվել են <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-03/18>> ծածկագրով բնական ջրի ձեռքբերման գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի նախագահը նշեց, որ <<Էվրի Դեյ>> ՍՊԸ-ն, էլեկտրոնային փոստի միջոցով, գնահատող հանձնաժողովին տեղեկացրել է իր կողմից նախապես ներկայացված գնային առաջարկը չփոփոխելու որոշման մասին (կից ներկայացվում է մասնակցի գրությունը) :

<<Սփլեշ Ուոթեր>> ընկերության տնօրեն Ա. Մանուկյանը ներկայացրեց գնման ընթացակրգին իրենց կողմից նվազեցված գնային առաջարկը. 5152000 ՀՀ դրամ՝ (ներառյալ ԱԱՀ-ն):

Հանձնաժողովն արձանագրեց, որ <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-03/18>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար <<Էվրի Դեյ>> և <<Սփլեշ Ուոթեր>> ընկերությունների գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Այնուհետև հանձնաժողովը քննարկման արդյունքում միաձայն որոշեց.

1. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-03/18>> ծածկագրով բնական ջրի ձեռքբերման գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցր մասնակից ճանաչել <<Էվրի Դեյ>> ՍՊԸ-ին,

2. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-03/18>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով մերժել <<Էվրի Դեյ>> և <<Սփլեշ Ուոթեր>> ընկերությունների գնային առաջարկները՝ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու հիմնավորումով,

3. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-03/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը:

Ա. Աբգարյան	Հանձնաժողովի նախագահ
Ա. Քալոյան	Հանձնաժողովի անդամ
Լ. Սողոմոնյան	Հանձնաժողովի անդամ
Հ. Քալաշյան	Հանձնաժողովի անդամ
Գ.Մանուչարյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան	Հանձնաժողովի քարտուղար